

**«ԸՆԿԱԼՈՒՄ, ԿԱՐԾԻՔ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ» ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Բանասիր. գիտ.թեկնածու, դոցենտ Հ. Զ. Ղազարյան

Հիմնաբառեր: Փոխանունություն, դարձվածք, իմաստ, նրբիմաստ, առանձնահատկություն, համարժեք, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն:

Խոսքին պատկերավորություն հաղորդող ոճական ամենագործուն հնարներից մեկը փոխանունությունն է, որի դեպքում բառը կամ բառակապակցությունն օգտագործվում է մեկ այլ բառի կամ կապակցության փոխարեն, որի հետ ունի պատճառահետևանքային, տրամաբանական կամ իմաստային այլ առնչություններ [1]:

Փոխանունությունը խոսքում տարբեր դրսևորումներ է ունենում: Այն կարող է գործածվել թե՛ ժողովրդախոսակցական լեզվում, թե՛ գեղարվեստական գրականության մեջ, թե՛ լեզվի գործառական այլ ոճերում:

Ոճական այս հնարով ձևավորվում են նաև բազմաթիվ դարձվածքներ, որոնք հատկապես արտահայտում են՝ սերում, պարունակողի և պարունակյալի, մասի և ամբողջի հարաբերություններ: Փոխանունությունը հատկապես տարածված է մարդու մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքներում: Հայերենում (և ոչ միայն) առկա են բազմաթիվ դարձվածքներ, որոնցում զգայությունների անվան փոխարեն գործածվում են զգայարանների անվանումներ, իսկ մարմնի մասերի գործառույթների փոխարեն՝ մարմնի մասերի անվանումներ: Ամբողջի ու մասի հարաբերությունն արտահայտվում է նրանով, որ «մարդուն» փոխարինում է մարմնի մի մասի անվանումը: Մարմնի մասի անվանումը կարող է փոխարինել ոչ միայն «մարդուն», այլև իր իսկ գործառույթների կամ

տվյալ մարմնի տվյալ մասին վերագրված զգացմունքների ամբողջությանը:

Այստեղից էլ առաջանում են սերման, պարունակողի և պարունակյալի հարաբերություն արտահայտող դարձվածքային միավորները [2]:

Ի թիվս այլ իմաստների՝ աչքը արտահայտում է մարդու ներքին նկատառումներն ու վերաբերմունքը: Աչքի տեսողական գործառույթի հետ է կապված ինչ-որ երևույթի ընկալումը, որն է երևույթի կամ որևէ մեկի մասին կարծիքի ձևավորումը: Չէ՞ որ մարդիկ արտաքին ազդեցությունների տպավորությունների հիման վրա են կատարում մտավոր վերացարկումներ, որ այս դեպքում կատարվում են տեսողության զգայարանի կողմից ստացված ազդանշանների հիման վրա, որոնք, հաղորդվելով ուղեղին, առաջ են բերում ընկալում ու կարծիք տվյալ առարկայի, երևույթի կամ մարդու վերաբերյալ:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի «աչք» բաղադրիչով *ընկալում*, *կարծիք*, *վերաբերմունք* արտահայտող դարձվածքների իմաստային և այլ առանձնահատկությունների ուսումնասիրությունը, վերլուծությունն ու գուգադրումն է, դրանց նմանությունների և տարբերությունների բացահայտումը: Նշված միավորներից մի քանիսը բազմիմաստ են, ուստի հոդվածում ընդգրկվել են միայն հիշյալ իմաստներն ու նրբիմաստներն արտահայտող դարձվածքները, որոնք պայմանականորեն բաժանել ենք երկու ենթադաշտերի՝ ա) ընկալում, ըմբռնում արտահայտող դարձվածքներ և բ) կարծիք, վերաբերմունք արտահայտող միավորներ:

Այժմ դիտարկենք ենթադաշտերը՝ բերելով մի քանի հայերեն, ռուսերեն և անգլերեն դարձվածքներ:

ա) Ընկալում, ըմբռնում՝

Աչքերը խոսել, - Աչքերը շատ արտահայտիչ լինել, մատնել ներքինը: *Հոքիք ջա՛ն, քո աչքերը լեզվիդ տեղակ խոսում են* (ՊՀ., 342):

Աչքերով խոսել, - Աչքերով մի բան հասկացնել: *Աչքերով էր խոսում*,

այն լեզվով, որը հասկանալի է բոլորին, առանց քերականական օրենքների (ՀԼԴԲ, 39): Աչքերը կարդալ, – Փորձել հասկանալ՝ ինչ է կատարվում մեկի հոգում: *Իրար հետ մի բառ անգամ չփոխանակեցինք, բայց իրար աչքերը կարդացինք, և մեր լռելյայն կարդացածից երևաց հետևյալը* (ԲՁ, Թարգմ., 307): Աչքերում/ աչքերի մեջ կարդալ, – Աչքերի արտահայտությունից հասկանալ, գուշակել մեկի մտածմունքը, մտադրությունը: Աչք (ու) հոնքով/ ունքով հասկանալ/ հասկացնել, – Աչք ու հոնքի օգնությամբ/ ակնարկներով հասկանալ/ հասկացնել: *Ժուլիերն ամուսնուն աչքով-ունքով հաս- կացրեց, որ նրան հանգիստ թողնի և այլևս ուշադրություն չդարձնի* (ՀԼԴԲ, 57): Աչքով ակնարկել, – Աչքով նշանացի մի բան հասկացնել: Աչքերով պահանջել, – Հայացքով՝ ակնարկով հասկացնել: *Հայրն աչքերով պահանջում էր, որ որդին չծխի երեխաների ներկայությամբ*: Աչքը սրտի հայելին է (ասացվ.), – Ենթադրվում է, թե աչքերի՝ հայացքի մեջ արտացոլվում են մարդու ներքնաշխարհը, նրա հոգեկան ապրումները: *Ա՛յ, աչքերդ ուրիշ բան են ասում, լեզուդ՝ ուրիշ: Իսկ աչքը սրտի հայելին է: Լեզուն կարող է կեղծել* (ԽՀ, 323): Բաց աչքով/ աչքերով, – Գիտակցաբար, հասկանալով, օրը ցերեկով: *-Է՛, շատ էլ ուրախացել է,- աչքս բաց՝ իմ տիրոջ ջոկատը հանեմ օտար իշխանի՞ տամ, աշխարհի վե՛րջն է* (ԴՎ, 514): Աչք(ը)/ աչքերը բանալ/ բացել/ բաց անել, – 1. Գիտակցության գալ, չարն ու բարին հասկանալ, կյանքը ճանաչել: 2. Գլխի գցել, հասկացնել, խելամիտ դարձնել, միտքը բանալ: 3. Խելամիտ դառնալ: – *Բայց դեռ վաղ է, դեռ նոր է աչք բացել, արևի շողք տեսել երեխես* (ԹԱ, 62): *Սկսեցի ինձ միսիթարել այն մտքով, որ կատարել եմ անկեղծ բարեկամի պարտքս, բանալով Լևոնի աչքերը* (ՇԵ, 466): Աչքը/ աչքերը բացվել, – 1. Այլևս միամիտ չլինել, սկսել հասկանալ, ըմբռնել շրջապատում կատարվող իրադարձությունները: 2. Հանկարծակի ճշմարտությունն իմանալ, հասկանալ, որ մինչ այդ սխալվել է, մոլորված եղել: *Ծերունու մինչ այդ բույն փակված աչքերը միան- գամից բացվեցան* (ԲԵ, IV, 351): – *Ե՞ս խնդրեմ նրանից, օօ՛, կաց, անխոս օձ, իմ եղբոր աչքերը վերջը կբացվեն* (ՇԵ, 47): Քողը

աչքերից ընկնել,- Հասկանալ ճշմարտությունը, բանի էությունը: *Տիկնոջ աչքերից քողն ընկել էր, նա ամեն բան պարզ տեսնում ու հասկանում էր: Աչքերով հարցնել, - Աչքերին հարցական արտահայտություն տալ՝ փորձելով հասկանալ: Ասողը նայում էր հարևաններին, աչքերով հարցնում էր, թե Բսոն եզր մորթի, ի՞նչ կլինի* (ԲԵ, 31):

Открывать глаза, - Դուրս բերել մոլորությունից, օգնել ինչ-որ բան ճիշտ հասկանալ: *Слова Марьи Ивановны открыли мне глаза и объяснили мне многое* (ПАК, 36). Раскрывать глаза,- Տես՝ Մեկին մի բան հասկացնել: *Я раскрою глаза этому дураку Николаеву, которого она третий год не может пропихнуть в академию* (КАС, I, 127). Видеть по глазам, - Աչքերից երևում է, աչքերը մատնում են: *На глаз/ глазок,- Գրեթե, մոտավորապես (վերցնել, հաշվել, որոշել): Он посмотрел на девушку и на глаз дал ей двадцать лет.* Пронизывать глазами – Ուշադիր նայելով՝ փորձելով հասկանալ: *Как будто пелена падает с глаз – Պարզ ու հստակ դառնալ: Мне дух захватывало. Падала, падала с глаз пелена* (ДФПо, 317). В глазах написано,- Բացահայտ է, աչքերը մատնում են: *С кем ни встретишься – поклон да пару слов, а с кем не кланяешься, так знаешь, кто он, куда и зачем идёт, и у того в глазах написано: и я знаю, кто вы, куда и зачем идёте* (ГИО, 37). Делать страшные глаза,- Նախազգուշացնել, հասկացնել մեկին: - *Не знаешь,- грозно воскликнул Сероштан и двинулся было на Архипова, но покосившись на офицера, только затряс головой и сделал Архипову страшные глаза* (КАС, I, 139). Глаза- зеркало души,- Աչքերից երևում է ներքինը: Աչքերը սրտի հայելին են: *Глаза открываются /открылись, - Ինչ-որ մեկը մոլորությունից ազատվում է, հասկանում իրերի վիճակը: И только теперь открылись глаза мои !* (ДФП, 290).

Open sb's eyes to sth,- Մեկին հանել մոլորությունից: *And this awful conduct, Mrs. Bute said, will have at least this good effect, it will open poor dear Miss Crawley's eyes to the real character of this wicked man* (ThWV, 162). **The eyes are the mirror of the soul,** – Աչքերից

հնարավոր է տեսնել: *I had made myself believe that the eyes are not the mirror of the soul* (ERPD, 251). See with half an eye,– Հասկանալ առաջին հայացքից: *Jack saw half an eye that all was over.*

Այս ենթադրաշտի դարձվածքները, ինչպես նկատում ենք, արտահայտում են մեկին ինչ-որ բան հասկացնելու (աչքերով խոսել, աչք ու ունքով հասկացնել, աչքով ակնարկել, աչքով պահանջել, *раскрывать глаза, делать страшные глаза, открывать глаза*), հասկանալու (*քողը աչքերից ընկնել, пронизывать глаза, see with half an eye*), գիտակցության գալու, խելամիտ դառնալու (աչքը/աչքերը բանալ, բաց անել) իմաստային նրբերանգները, ընդ որում, հարկ է նշել, որ վերջիններս առկա են բոլոր երեք լեզուներում:

Դարձվածքներից մի քանիսում ընդգծվում, շեշտվում է այն միտքը, որ աչքերի արտահայտությամբ հնարավոր է հասկանալ, ըմբռնել, թե ինչ է կատարվում մարդու հոգում, հասկանալ, թե տվյալ անձը հոգեկան ինչ վիճակում է՝ զայրացած, վախեցած, հուզված, ասում է ճշմարտությունը, թե ստում (*բաց աչքով/աչքերով, աչքերը/աչքերի մեջ կարդալ, աչքը սրտի հայելին է, как будто пелена падает с глаз, глаза-зеркало души, open sb's eyes, the eyes are the mirror of the soul*): Դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի:

Հայերենի և անգլերենի դարձվածքները բայական երկանդամ, եռանդամ և քառանդամ կառույցներ են: Բացառություն են կազմում հայերենի *աչքը սրտի հայելին է* հաղորդակցական դարձվածքը և վերջինիս համարժեքները ռուսերենում և անգլերենում՝ *глаза-зеркало души* և *the eyes are the mirror of the soul*: Կարծում ենք, որ այստեղ գործ ունենք պատճենման հետ: Հայերենում դարձվածքն ամենայն հավանականությամբ պատճենվել է ռուսերենից, սակայն ինքը՝ ռուսերենը, կարծում ենք, այն պատճենել է անգլերենից կամ հնարավոր է նաև ֆրանսերենից, քանի որ անգլերենը ևս այն փոխառել է ֆրանսերենից: Ռուսերենի դարձվածքները ևս բայական կառույցներ են բացառությամբ *на глаз(ок)* մակբայական դարձված-

քի, որ ծավալվելով անորոշ դերբայով հեշտությամբ վերածվում է բայական կառույցի:

Ռուսերենի և անգլերենի դարձվածքները մենիմաստ են: Ինչ վերաբերում է հայերենին, ապա ենթադաշտի մենիմաստ դարձվածքների կողքին հանդիպում են նաև բազմիմաստները՝ **աչքերը բանալ/ բացել/ բաց անել, աչքերը բացվել**: Նույնիսկ այս դարձվածքների դեպքում դիտարկել ենք միայն այս ենթադաշտին բնորոշ իմաստները:

Միրտ բաղադրիչը երբեմն փոխարինվում է **հոգի** բաղադրիչով (ի դեպ, անգլերենում և ռուսերենում օգտագործվում է միայն «հոգի»-ն), և դարձվածքը չի զրկվում իր իմաստից:

բ) Կարծիքի առկայություն, ձևավորում՝

Աչքին բարձրանալ/ մեծանալ/ բարձր դասվել, - Բարձր կարծիք կազմել մեկի մասին: *Նրա աչքին Միհրանը հետզհետե մեծանում էր, նրա սրտի մեջ խոր համակրանք ու հիացմունք ստեղծում* (ԹԱ, 472): **Աչքում բարձրանալ/ բարձրացնել(մեկի)**, - Մեկի մոտ հեղինակությունը՝ վարկը բարձրանալ կամ բարձրացնել:

Նա չպիտի նվաստացնե՛ր իրան, այլ պիտի բարձրացնե՛ր նույնիսկ Սևադայի աչքում (ՄԳ., 128): **Աչքում գին/ արժեք ունենալ (մեկի)**, - Մեկի համար արժեք ներկայացնել, գնահատվել մեկի կողմից: *Ես, հո գիտես, կարոտ չէի այդ զարդերին և դրանք գին չունեին իմ աչքում իբրև քարեղեն* (ՄԳ., 52): **Աչքում գին ստանալ (մեկի)** - Գնահատվել, արժևորվել: *Ահա թե ինչով է պատավր զրավել երիտասարդին, - մտածեցի ես և իմ աչքում գին ստացավ տիկնոջ այդ հատկությունը* (ՀԼԴԲ, 57): **Աչքին նայել (մեկի)**, - Մեկից օրինակ վերցնել, մեկին ակնածանքով վերաբեր- վել: *Այստեղ ահա նահապետական սուրբ ավանդությունը պարզ արտափայլում է, տան նահապետն յուր լիազոր իրավունքի մեջն է, ամենքը նրա աչքին նայում, նրանից ակնածում են* (ՊՀ, 80): **Աչքին գալ**, -Աչքին երևալ, գնահատվել, ուշադրություն դարձնել, կարևորություն ունենալ: *Բայց ո՛չ երեխեքանց սուգը, ո՛չ կնանոնց լացը, ո՛չ մահն ու կյանքը էլ նրանց աչքին չեկան* (ԱՎ, 77): **Աչքին/աչքում երևալ (առվելապես հարցական և**

ժխտական), - Արժեք, կարևորություն ունենալ: *Բայց Հայաստանի հետ բաղդատելով ուրիշ տեղերը, իմ տեսած քաղաքների հայերը իմ աչքումս խորթ եղբայրներ են երևում* (ՊՀ, 360): Աչքում կշիռ/ հարգ ունենալ,- Հարգվել, գնահատվել, արժևորվել: *Ճշմարտությունը ավելի մեծ հարգ ունի իմ աչքումը, քան թե աշխարհի բոլոր թանկագին գոհարները, հարստությունքը* (ՀԼԴԲ, 58): Աչքի և գլխի վրա տեղ ունենալ, - Մեկի համար ամենապատվավոր հյուրը լինել:- *Իմ տունը ձեր տունն է, աչքիս և գլխիս վրա տեղ ունեք* (ԲԵ, IV, 179): - *Մեր գլխի, մեր աչքի վրա տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտերի այվանի (վերնահարկ) կտերը* (ՊՀ, 55): Աչքի խելքով (խսկց.),- Երկու աչքով նայել (շատ ուշադիր նայել),- Մի բանի կամ մեկի մասին արտաքինից դատելով: *Դրան երկու աչքով է պետք նայել, աչքից ծարիր թոցնող է* (ՀԼԴԲ, 219): Աչքը գալ, - Կարևորություն ունենալ, նշանակություն ստանալ, երևալ: Աչքին տեղ ունենալ,- Արժեք, կարևորություն ունենալ: Իր աչքից/ աչքին ընկնել/ նվաստանալ, - Ինքն իրենից զզվել, իրեն ստորացած զգալ, ինքն իր առաջ նվաստանալ: *Շատ զղջաց քննիչն յուր անխոհեմության մասին, յուր մեծահոգությունները յուր աչքին նվաստացան* (ՊՀ, 374): Այլ/ ուրիշ աչքերով նայել,- Նոր տեսանկյունով քննել, գնահատել, իր կարծիքը վերանայել, այլ կերպ վերաբերվել: *Ժամանակակից երիտասարդության արտաքին հարդարանքին այլ աչքերով պիտի նայել* (ՀԼԴԲ, 18): Ուրիշ աչքով նայել,- Ոչ բարյացակամ վերաբերվել, հետին միտք ունենալ: Աչքում գցել (մեկի), - Մեկին բամբասելով, ամբաստանելով, վատաբանելով ուրիշների մոտ վարկաբեկել: *Քեզ Միհրներսեսի աչքում գցելով նա չի հանգստանա* (ԴՎ, 297): Աչքում ընկնել/ կոտրվել (մեկի), - Հեղինակությունը՝ վարկը կորցնել: *Որքան նա հպարտ պահեց իրեն, այնքան ինքն ընկավ նրա աչքում* (ՇՔ, 284): Մի աչքով նայել, - Թերագնահատել, արժանիքը չճանաչել, կարևորություն չտալ, հաշվի չառնել, արհամարհել: *Աչքից ընկնել/ հանել/ ձգել*, - Նախկին հարգանքը չունենալ, այլևս չհարգվել, չսիրվել: *Միհրներսեսի կյանքը վտանգվեց: Նրան սպասում էր մահապատիժ:*

Նա ընկավ Հազկերտի աչքից (ԴՎ, 727): Նոր չէր, որ ՄՏ կայանի ղիրեկտորն ընկել էր նրա աչքից (ԽՀ, 395): Աչքից դուրս գալ/ ելնել, - Անմիջական ուշադրությունից ելնել, նախկին հարգանքը չունենալ, աչքից ընկնել: Աչքին(բան) չերևալ, - Արժեք, կարևորություն չունենալ: - Մայր, ճշմարիտ ես ասում,- պատասխանեց որդին,- աշխարհիս փառքն ու վայելչությունը աչքիս չեն երևում (ԱԵ, 344): Խնամողի աչքով էր Պետին նախիրին նայում (ԲԵ, 54): Այս կամ այն աչքով նայել (մեկի կամ մի բանի), - Այս կամ այն չափանիշով մոտենալ մեկին կամ մի բանի: Աչքին ալարովա երևալ (բրբ.), - Աչքին այլ կերպ երևալ, աչքին անսովոր՝ տարօրինակ երևալ: Դու ինձ մի աչքով ես նայում/ տեսնում, - Ինձ անշնորհք՝ տկար մա՞րդ ես կարծում, ինձ թերագնահատո՞ւմ ես: Աչքով դիտել/ նայել (մեկի), - Մեկի տեսակետով դիտել՝ նայել:

В глазах, - Ինչ-որ մեկի կարծիքով, պատկերացմամբ: *И наконец, что ж такое в глазах его, чтоб до такой степени смеяться надо мной?* (ДФУ, 249). Возвышать в глазах, - Ինչ-որ մեկին բարձրացնել աչքում: *Этот поступок – героический и бескорыстный – сильно возвысил его в глазах родственников* (РАФ С, 117). На глаза(х) (hնց.), - *Она на мои глаза похудела в последнее время.*

Вырастать в глазах,- Նվաճել մեկի հարգանքը, բարձրանալ աչքին: *Сейчас объясню, что вышло, но теперь хочу лишь припомнить как я вдруг ей тогда шик задал и вырос в её глазах* (ДФПо, 296). Смотреть свежими глазами,- Թարմ աչքերով նայել, նոր տեսանկյունով նայել: Смотреть/ глядеть глазами, - Մեկի ազդեցության տակ լինելով՝ նրա կարծիքն ունենալ: *Я по вашей теории знаю всё, смотрю на вещи вашими глазами: я воспитанник вашей школы, а между тем мне скучно жить, тяжело, невыносимо* (ГИО, 260). Ронять/ уронять в глазах,- Ինչ-որ մեկին գցել մեկի աչքում, նսեմացնել: *Через равные промежутки времени хозяин ударом ноги под стойкой вышибал за порог бродячую собаку, ронявшую его заведение в глазах иностранцев* (РАФ С, 118). Свет померк в глазах, - Ամեն ինչ տհաճ, տգեղ է դարձել մեկի համար: Мерить/ смерить/ смерять глазами, - Ակնդետ նայելով՝

փորձել գնահատել: *Смотреть/ глядеть другими/ иными глазами*, - Գնահատել, վերաբերվել այլ տեսանկյունից, դիրքից: *Доктора, жившего тут же, за перегородкой, он видел теперь чаще всех и смотрел на него совсем другими глазами* (РАФ С, 116).

In sb's eyes, - Մեկի կարծիքով, մեկի աչքին/ աչքում: «*Such a going-on by my sister might prejudice me in her eyes*» (САН, 65). *If that unlucky letter has prejudiced her against him, go at once, and tell her that he has cleared himself in your eyes and in mine* (CWW, 133). A jaundiced eye, - Կանխակալ, կանխահամոզված հայացք, կարծիք: *She views the world with the jaundiced eyes of a woman who subconsciously realizes she has missed something which means in point of fact that she has missed everything* (ERP D, 253). Spit in sb's eye, - Մեկին արհամարհանքով վերաբերվել: *That scoundrel spits in the eye of the society*. Look with another eye upon sth, - Գնահատել, վերաբերվել մի բանի այլ տեսանկյունից: See sth. with sb's eyes, - Նոր տեսանկյունով քննել, գնահատել, իր կարծիքը կազմել ուրիշի ազդեցության տակ: *She'd been rather nervous of the architect's plan, then she began to see it with his eyes* (ERP D, 257). Folly is wise in her own eyes (ասացվ.), - Ամեն հիմար խելոք է իր աչքում՝ իր կարծիքով: Beauty is in the eye of the gazer (ասացվ.), - Յուրաքանչյուրն ունի իր պատկերացումը գեղեցկության մասին:

Ինչպես նկատում ենք, այս ենթադաշտի դարձվածքներն ուսումնասիրելիս դրանցից մի քանիսը, բացի ենթադաշտին բնորոշ ընդհանուր իմաստից, ունեն նաև մի շարք իմաստային նրբերանգներ: Նախ հարկ է նշել, որ ենթադաշտի դարձվածքների շարքում տեղ են գտել թե՛ այնպիսիք, որ արտահայտում են դրական կարծիք, վերաբերմունք և այլն, և թե՛ այնպիսիք, որ օժտված են բացասական վերաբերմունքի, կարծիքի նրբիմաստներով: Այսպես, օրինակ՝ հայերենում և ռուսերենում առկա են «մեկի կամ մի բանի մասին բարձր կարծիք ունենալու, նման կարծիք ստեղծելու, մեկի աչքին բարձրանալու, նրա կողմից բարձր գնահատվելու», ինչպես նաև «որևէ մեկի մասին վատ կարծիք ունենալու, նսեմա-

նալու» իմաստային նրբերանգները (**աչքում/ աչքին բարձրանալ, աչքին զին արժեք ունենալ, իր աչքից/ աչքին ընկնել/նվաստանալ, աչքում զգել, աչքում ընկնել, աչքում կորչել, աչքից հանել, возвышать в глазах, возрастать в глазах, ронять в глазах, свет померк в глазах**): Հայերենում առկա են նաև «հարզվելու և հարզանքից զրկվելու» և «աչքում հատուկ արժեք, կարևորություն ունենալու» և այդ «արժանիքներից զրկվելու» նրբերանգները (**աչքին նայել, աչքին գալ, աչքին/ աչքում (յ)երևալ, աչքին կշիռ/ հարզ ունենալ, աչքի և գլխի վրա տեղ ունենալ, աչքը գալ, աչքին տեղ ունենալ, աչքից ընկնել, աչքից դուրս գալ**): Միայն հայերենին է բնորոշ նաև «մեկին թերագնահատելու» նրբիմաստը (**մի աչքով նայել, դու ինձ մի աչքով ես նայում/ տեսնում**):

Ենթադաշտի դարձվածքներում կարելի է նաև նկատել «կարծիքի փոփոխության, մարդկանց ու իրերին այլ տեսանկյունից նայելու, այլոց կարծիքով շարժվելու» նրբիմաստները, որ առկա են բոլոր երեք լեզուներում (**աչքում զին ստանալ, այլ/ ուրիշ աչքերով նայել, աչքով դիտել/ նայել (մեկի), смотреть свежим глазом, смотреть/ глядеть глазами, смотреть другими глазами, look with another eye, see sth. with sb's eyes**): Միայն անգլերենին է հատուկ «կանխակալ կարծիքի» և «արհամարհանքի» (**a jaundiced eye, spit in sb's eye**), իսկ հայերենին՝ «իր իսկ աչքին նվաստանալու» (**իր աչքից/ աչքին ընկնել**) իմաստային նրբերանգները:

Ենթադաշտի դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Այսպես, հայերենի և ռուսերենի դարձվածքների ճնշող մեծամասնությունը բայական երկանդամ, եռանդամ և սակավաթիվ դեպքերում քառանդամ կառույցներ են (հայերենում հարադրությունները և հարադիր բայերը դիտվել են որպես մեկ միավոր): Հայերենում առկա են նաև մեկ ածականական (**աչքի ընկնող**), մեկ մակբայական (**աչքի խելքով**) և մեկ հաղորդակցական (**դու ինձ մի աչքով ես նայում**) դարձվածքներ: Ռուսերենում բացի բայական կառույցներից կան նաև մակբայական միազագաթ կառույցներ (**в глазах, на глазах**): Ավելի բազմազան են անգլերենի

դարձվածքների կառուցվածքային տիպերը: Այստեղ հանդիպում են բայական (**spit in sb's eye, look with another eye, see sth with sb's eyes**), գոյականական (**a jaundiced eye**), մակբայական (**in sb's eyes**) և հաղորդակցական (**folly is wise in her own eyes beauty is in the eye of the gazer**) դարձվածքներ:

Դիտարկվող դաշտի դարձվածքներում գործում են անվանական և բայական քերականական կարգեր՝ առկայացման, թվի, հոլովի, դեմքի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական-ժխտականի: Դրանցից մի քանիսն ունեն իմաստագատիչ դեր, մյուսները զուրկ են այդ դերից: Դարձվածքների գլխավոր անդամը, շարահյուսության տեսակետից, տարբեր է՝ կախված կառուցվածքային տիպերից: Ինչ վերաբերում է գլխավոր՝ անդամին իմաստային առումով, ապա բոլոր դարձվածքների առանցքային անդամը «աչք» բաղադրիչն է: Բոլոր դարձվածքները, ըստ բաղադրիչների իմաստային միաձուլության աստիճանի, դարձվածքային սերտաճումներ և միասնություններ են՝ անօտարելի և անփոփոխելի բաղադրիչներով, այլապես դարձվածքները կզրկվեն իրենց իմաստից: Լավագույն դեպքում դրանք այլ նրբիմաստ ձեռք կբերեն: Մի դեպքում՝ հայերենի **աչքի և գլխի վրա տեղ ունենալ** դարձվածքում «գլուխ» բաղադրիչի օտարման դեպքում դարձվածքը կպահպանի իր իմաստը:

Դարձվածքների մեջ նկատելի են դարձվածքային տարբերակներ՝ **Աչքերում/ աչքերի մեջ կարդալ** (քերականական), **Աչք (ու) ունքով/ հոնքով հասկանալ/ հասկացնել** (քանակական, բառային), **Բաց աչքով/ աչքերով** (քերականական), **Աչքին բարձրանալ/ մեծանալ** (բառային), **Աչքում գին / արժեք ունենալ** (բառային), **Աչքում կշիռ / հարգ ունենալ** (բառային), **На глаз (ок)** (քերականական), **Глаза открываются/ открылись** (քերականական), **Смотреть/ глядеть глазами** (քերականական), **Мерить/ смерить/смерять глазами** (քերականական):

Այս դաշտում անգլերեն դարձվածքային տարբերակներ առկա չեն: Դաշտում տեղ են գտել նաև հոմանիշային մի քանի շարքեր՝

ըստ արտահայտած նրբիմաստի՝ Աչքերով խոսել - Աչքին ունքին նայել - Աչքով ականարկել - Աչքերը բանալ Աչքերի քողը վերցնել; Աչքերը կարդալ - Բաց աչքով - Աչքը բանալ- Աչքերը բացվել - Աչքերից կապն ընկնել; Աչքին բարձրանալ - Աչքին բարձր դասվել - Աչքին գին/ արժեք ունենալ/ ստանալ - Աչքին լավ դուրս գալ - Աչքին նշանակություն ունենալ; Աչքի(ն) գալ - Աչքին երևալ - Աչքին տեղ ունենալ; Աչքին կշիռ ունենալ - Աչքին հարգ ունենալ - Աչքի ու գլխի վրա տեղ ունենալ; Աչքում ընկնել - Աչքից ընկնել - Իր աչքում ընկնել - Աչքում կորչել - Աչքից գցել - Աչքից հանել - Աչքե ձգել; Открывать глаза – Раскрывать глаза; Видеть по глазам – Пронизывать глазами;

В глазах написано – Глаза зеркало души; Глаза открываются – Пелена падает с глаз; В глазах – На глазах; Look with another eye – See sth with sb's eyes; Folly is wise in her own eyes – Beauty is in the eye of the gazer և այլն:

Առաջին ենթադաշտում դարձվածքային հականիշներ չկան: Իսկ երկրորդում հականիշային զույգեր կարելի է նկատել՝ կախված դրական և բացասական կարծիք, վերաբերմունք արտահայտող դարձվածքների առկայությունից՝ **Աչքին բարձրանալ – Աչքից ընկնել; Աչքում գին ստանալ – Աչքում կորչել; Աչքին երևալ – Աչքին չերևալ; Աչքում բարձրանալ – Աչքում գցել; Возвышать в глазах – Ронять в глазах; Вырастать в глазах – Свет померк в глазах.**

Իմաստային այս դաշտում նկատելի են նաև մի շարք դարձվածքներ, որ ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ երկու լեզուներում՝ **Աչքը սրտի հայելին է - Глаза зеркало души – The eyes are the mirror of the soul; Աչքը/ աչքերը բանալ/ բացել – Открывать глаза (кому) – Open sb's eyes to sth; Աչքը/ աչքերը բացվել – Глаза открываются/ открылись; Քողը աչքերից ընկնել – Пелена падает с глаз; Աչքին բարձրանալ/ մեծանալ – Вырастать в глазах; Աչքում բարձրացնել – Возвышать в глазах; Այլ/ ուրիշ աչքերով նայել – Смотреть/ глядеть другими глазами – Look with another eye upon sth; Աչքում գցել – Ронять/ уронять в глазах.**

Ուսումնասիրված դարձվածքներն ունեն ոճական տարբեր կիրառություններ:

Դրանք հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում: Դրանցով բավականին հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիտարկված դարձվածքների մեծ մասը յուրահատուկ է այս կամ այն լեզվին: Մյուս կողմից, որոշ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզվում: Այդ դարձվածքներն օժտված են իմաստային, կառուցվածքային, քերականական և ոճական առանձնահատկությունների ընդհանրություններով և տարբերություններով, որ վկայում են այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության մեջ առկա ընդհանրությունների և տարբերությունների մասին: Սա էլ իր հերթին նպաստում է տարբեր լեզուների համակարգերում դարձվածաբանական ընդհանրությունների բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԵՀ – Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 1990, էջ 359:
2. ԳՀ – Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., Երևանի համալս. հրատ., 1969:
3. ՊՀ – Պռոշյան Պ., Հացի խնդիր, Երևան, Հայաստան հրատ., 1968:
4. ՍԳՀ – Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
5. ԲՋ – Բրունտե Շ., Ջեյն Էյր, Ե., 1988:
6. ԽՀ – Խանզադյան Ս., Հողը, Ե., 1964:
7. ԴՎ – Դեմիրճյան Դ., Վարդանանք, Երևան, 1987:
8. ԹԱ – Թորգոմյան Ծ., Անմար կրակներ, Ե., 1959:
9. ՇԵ – Շիրվանզադե Ա., Երկերի լիակատար ժողովածու, հ.

4, Երևան, Պետ հրատ., 1930:

10. ԲԵ – Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ.4, Ե., 1983:
11. ԲԵ – Բալունց Ա., Երկեր, «Սովետ. գրող» հրատ., 1986:
12. ПАК – Пушкин А. С. Капитанская дочка. Л., 1949.
13. КАС – Куприн А.И. Сочинения в 2-х томах. Т.1. М., 1981.
14. ДФПо – Достоевский Ф.М. Повести. Бедные люди. Л., 1984.
15. ГИО – Гончаров И. А. Обыкновенная история. М.: Худ. лит., 1968.
16. ДФП – Достоевский Ф.М. Преступление и наказание. М., 1983.
17. ThWV – Thackeray W. M. Vanity Fair, London, 1991.
18. ERPD – English-Russian Phraseological Dictionary. SE, 1982.
19. ՄԳ – Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1957:
20. ԱՎ – Արուսյան Խ., Վերք Հայաստանի, Ե., 1975:
21. ՇՔ – Շիրվանզադե Ա., Քառու, Ե., 1955:
22. ԱԵ – Աղայան Ղ., Երկեր, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1979:
23. ДФУ – Достоевский Ф.М. Униженные и оскорбленные. Бедные люди. М., 1974.
24. РАФС – Квеселевич Д.И. Русско-английский фразеологический словарь. М., 1998.
25. САН – Cronin A.J. Hatter's Castle, "FL. Publ. House" M., 1963.
26. CWW – Collins W. The Woman in White, USA, 1934.

Ключевые слова: метонимия, фразеологизм, особенность, эквивалент, общность, различие, языковое мышление.

Казарян А.З. - Фразеологизмы, выражающие восприятие, отношение и мнение в армянском, русском и английском языках. - С помощью метонимии, являющейся одним из наиболее действенных стилистических приемов, придающих речи образность, образуется множество фразеологизмов. Среди них важное место занимают фразеологизмы, включающие названия частей тела.

Целью данной статьи является исследование, анализ и сопоставление особенностей армянских, русских и английских фразеологизмов с компонентами

“глаз”, выражающих восприятие, отношение и мнение. Выявлены некоторые общие и различительные черты семантические, структурные, грамматические и стилистические особенности фразеологизмов рассмотренных языков, что указывает на общность и различие в языковом мышлении народов, говорящих на данных языках.

Keywords: metonymy, phraseological unit, peculiarity, equivalent, similarity, difference, linguistic thinking.

Ghazaryan A.Z. - Phraseological Units Expressing Perception, Attitude and Opinion in Armenian, Russian and English. - Numerous phraseological units are formed by the stylistic device metonymy which is one of the most active devices, making the speech figurative and expressive. Among these phraseological units, there are a great number of phraseological units, including names of body parts.

The goal of the article is to investigate, analyze and compare the peculiarities of the Armenian, Russian and English phraseological units with the component “eye”, expressing perception, attitude and opinion. Some similarities and differences of the mentioned peculiarities are revealed in the semantic, structural, grammatical and stylistic characteristics of the units of the languages considered, which speaks about the similarities and differences between the linguistic thinking of the people speaking the given language.